50. ՌԵՆՋԲԱՐ

Ռենջբրրի մի մեկ կէղի, հինգ-չորս եզ կունենա, հինքն ա, մեկ կընիկ: Ջավակ չունի:

Օրերու մեկին կէրթա արտ վաՀր էնելու, մեկ եզ կը պառկի: Ինչ կէնա, եզ չէլի վեր: Կը պերա, կրակ կը վառա եզան կըշտին, եզան կուշտ կը վառի: Էլմի եզ չէլնի վեր:

Եզան կը թըքուցա, կասա. - Մուռտա՛ռ, դու հորի՞ չըս էլի վեր:

Աստըծու հրամանքով եզ կէլի լեզու, կասա. - Ռենջբա՛ր, ես մուռտառ չեմ, մուռտառ դուք եք, օր ամեն օր կը մուռտըռվիք: Մենք տարին մեկ խետ ենք:

Եզան խոսքի ասելուն պես տըղեն կասա. - Ուխտ էղի հառճեվ Աստըծու, ես պըտի մեկ խետ էրթամ իմ տեղ, մինչև օր իմ տարին թըմի:

Տարին օր կը թըմի, Աստըված էտոր տըղե մի կուտա: Էտ տըղեն կը մեծնա, կէղի յոթ տարեկան, էն մեկ օր մոր կասա. - Մարե՛, էսօր ես խաց կը տանիմ իմ խոր:

Մեր կասա. - Լա՛ռ, մեռիմ քեզի, դու էրեխա ես, դու ի՞նչ գիտես՝ արտ էրթաս:

- Մարե՛, - կասա, - հորի՞ ես չըմ գիտեր, իմ խեր գո եկեղեցու ձորի արտն ա կը վաՀրա:

Հընց մեր էտտեղ կը զարմանա: Կէլի, խաց կը տնա բերի մեզրի մեչ, կապա տըղի շալաք, կընգի տըղի էտեվ: Տըղեն դեմ կէրթա խոր մոտ:

Խեր կը տեսի, օր տըղեն առավ խաց, էկավ:

Կընգան վերեն շատ կը հեռստի, կը տեսի, օր կընիկն էլ հետեվանց էկավ:

Կասա. - Կընի՛կ, դու էս էրեխեն հորի՞ խաց տվեցիր՝ առավ, էկավ:

Կընիկ կասա. - Մա՛րթ, ես ի՞նչ էրեցի, ծեռնեն չըպռծա:

Խեր խոտղուն կասա. - Կայնի՛, կայնի՛, խարոր ՝արցըկեմ:

Տըղեն կասա. - Ափո՛, փա՛թ մ' էլ գընա՝, վ' արի, մըկա մեզի կղունախ կուգա՝:

Խեր տըղի խոսք չըկոտրա: Փաթ մ' էլ կէրթա ու գա՝, տեսի, օր էրկու ձիավոր էնդեխեն էկան:

Խերն էնտեղ կըզի, Աստըծուց շուքըր կուտա, կասա. - Վալա՛, եզա՝ն խոսք պիտի կատարի:

Ընտեղ ձիավորներ կուգա՝ն, իճին, խաց կը պերեն, ուտեն, ձիավորներ կէրթան, խեր տըղի էրեսներ կը պաքա, կասա. - Կընի՛կ, էլի՛, տըղեն ա՛ռ, գընա՝:

Կը մընա շա՝պաթ մի վերճ, էն մեկ օր տըղեն կասա. - Մարե՛, հէսօր աղեկ զա՝ստ կէնես, խավ մի կը մորթես, հէսօր ես խաց կը տանիմ իմ խոր: Իմ խոր էլի կղունախ կուգա՝:

Մերն ա, էլ տըղի խոսք չըկոտրա: Իմալ օր տըղեն կասա, էմալ խաց ու զա՝ստ կէնա, կասա. - Տըղա՛, դ' էլի՛ ա՛ռ, գընա՝:

Տըղի կառի զխաց, կուգա՝ արտ՝ խոր մոտ:

Կասա. - Բա՝ռի օր քեզի, ափո՛: Աստըված քեզի ուժի՛կ տա:

Խեր խոտղուն կասա. - Տըղա՛, կեսօր ա, կայնի՛ ՝արցըկենք:

Տըղեն կասա. - Ափո՛, փա՛թ մ' էլ գընա՝ ու արե՛: Հէսօր մեզի էլմի կղունախ կուգա՝:

Խեր տըղի խաթըր չըկոտրա:

Փաթ մ' էլ կէրթա, ու գա՝, կը տեսի, օր էրկու ձիավոր էնդեխեն էկան:

Տըղեն կէրթա ձիանքներու գըլուխ կը պըռնա, ձիավորներ կիճին, խաց կուտեն ուրանց, տըղեն կիմնա, օր էտոնք դոր կէրթան:

Կասա. - Դու դո՞ր կէրթաք:

Կասեն. - Մենք էլ չընք գիտե դո՞ր կէրթանք:

Տըղեն կասա. - Հա՝լբա՝թ ձեզի խըզմաթ մի կա, օր կէրթաք:

Կասա. - Մեր թանգավոր խիվանդ ա, հեքյըմի սալըխ ա տըված ան, կէրթանք, օր էն հեքիմ գըտինք, պերենք:

- Է՛, - կասա, - դու ի՞նչ գիտեք, օր հեքիմ դո՞ր ա:

Կասեն. - Մենք էլ պըտի էրթանք շուռ գանք, չուր զէտ հեքիմ գըտինք:

Տըղեն կասա. - Ի՞նչ կուտաք ընձի, օր ես ձեզի հեքյըմի տեղն ասեմ:

Կասին. - Տըղա՛, օր դու մըկա մեզի հեքյըմի տեղն ասես, էտա քու արախչով քեզի օսկի կուտանք:

Համա տըղեն արախչին գըլխուց կը խանա, կասա. - Դե լըցե՛ք, տեսինք, օր թա դուք սութ չասիք:

Խուրջու պերան կը պանան, տըղի արախչին իլին օսկի կը լըցեն:

Տըղեն կասա. - Դու կէրթաք ֆըլան քաղաք, ֆըլան քուչեն, քսանուխինգ նոմեր, կարմիր տըներ, կէրթաք, հեքիմն էնտեղն ա: Դե գացե՛ք, Աստըված ձեր պան հաճողա:

Էնոնք դեն կէրթան, տըղեն ու խեր վըր օսկուն կուրախնան, կհարցըկեն խարոր, կու գան տուն:

Տըղեն կասա. - Մարե՛, քեզի արախչի՛մ օսկի պերեր եմ հէսօր:

Մեր չավտա: Տըղեն համա ըզյազմեն ծոցեն կը խանա, օսկին կը տառտըկա գյետին:

Մերն էնտեղ կուրախնա: Էնոնք թըխ մընան ուրանց ուրախութենի մեչ, մենք տառնանք վըր ձիավորներուն:

Ինչպես օր տըղեն թարիֆ կէնա, էնպես ձիավորներ կէրթան, հեքիմ կը գըտին:

Հեքյըմին կասին. - Մեր թանգավոր խիվանդ ա: Պըտի գաս, օր մեր թանգավոր սաղցուս:

Հեքիմ կասա. - Դու ի՞նչ գիտիք, օր թա ես էստեղն ի:

Էտոնք կասեն. - Խարցուցինք, էկանք, գտանք:

Հեքիմ կասա. - Չէ՛, էտ ասողն ընձի ասե՛ք, օր չասեք, ես չըմ իգա:

Էտոնք կասեն. - Վալա՛, ֆըլան տեղ մենք էկանք, խարորի մի մոտ մեկ պըստիկ էրեխե մի մեզի ասաց:

Հեքիմ կասա. - Տարցե՛ք, գտցե՛ք, էն տըղեն տարե՛ք, օր էն տըղեն ձեր թագավոր չըսաղցու, ես չըմ կանար սաղցու: Ձեր թագավորի հեքիմն էն ա:

Ձիավորներ կէլին, փոշման ետ կուգան: Կէրթան թագավորի մոտ:

Թագավոր կասա. - Հու՞ր ա էն հեքիմ, պերի՞ք:

Կասեն՝ չէ՛:

Ինչպես օր հեքիմ ձիավորներուն ասեր էր, էնոնքյ էլ թագավորին ասեցին:

Թագավորն ասաց. - էտ տըղեն դո՞ր էղի, խըլըսուն կէրթաք, ընձի կը պերեք:

Ձիավորներ խըլըսուն էլան ու դեմ էկան ռենջբըրի արտ: Տեսան, օր ռենջբար դըռ արտն էր:

Ասին ռենջբըրին. - Քո տըղեն տո՛ւր մեզի: Քո տըղի ինչքա՞ն օր օսկի կուզես, կուտանք ու քո տըղեն կը տանինք: Չէ՛, օր չիտաս էլ, զոռով պըտի տանինք: Արի՛, քո խաթրով տո՛ւր, քեզի պավականի օսկի կուտանք, գընա՛, ապրի՛:

Էտ մարթն էր իրիկուն առավ ձիավորներ, էկավ ուր տուն:

Ասաց. - Կընի՛կ, էսա մարթիքն էկած ան, մեր տըղեն կուզեն տանին, դու ի՞նչ կասես: Թե օր մենք չիտանք էլ, զոռով կը տանին:

Տըղեն ասաց. - Ափո՛, դու հորի՞ կը վախենաս, ընձի տո՛ւր, թ'առին, էրթան: Ես, օր չըմեռիմ, էլի քեզի կը քըտիմ:

Մարթն էլավ, մեկ խազար օսկի փարա էտոնց մոտեն առավ, տըղեն տըվեց, առան, գացին: Տըղեն տարան թագավորի մոտ: Թագավոր զտըղեն օր տեսավ, տաս տարեկան էրեխե մ' էր:

Ասաց. - Տըղա՛, դու ընձի կանա՞ս սաղցուս:

Տըղեն ասաց. - Թե Աստըված կամեցեր ա, ես քեզի կը սաղցում:

Ասաց. - Տըղա՛, իմ դեղն ի՞նչ ա, ասա՛, օր ճամբխեմ, պերեմ:

Ասաց. - Քո դեղ գիտե՞ս ինչ ա, նա ֆըլան գեղի մեչ թուխ մաքյի մի կա Մարտիրոսին, էն մաքյին դըռ չըծըներ ա: Էն մաքյին օր ծընավ, էրկու գառ կը բերա, մեկ կարմիր ա, մեկ էլ սիվտակ ա: Քո դեղն էն կարմիր գառու միսն ու արուն ա: Պեթք ա զէն միսն ուտես ու էնոր արնով էլա լողկընաս, դու կը փըրկըվիս: Համա պեթք ա՝ քո մարթիք շուտով էրթան, էն մաքյին գըտին ու էն

մաքուն մուղաք կէնան: Էն մաքյին օր կը ծընի, էն կարմիր գաՀռ չըթողեն ընգի գյետին: Ուր մոր կաթն էլ չուտա: Համա էմալ շուտով վերցեն, պերեն: Ուրիշ տեղ գյետին չըտընեն: Պերեն էսատեղ, օր դու քո ծեռնով զէն գաՀռ մորթես, օր դու փըրկըվիս: Օր էսպես չէրեցիր, դու չըս փըրկվիր: Էլ ընձի մեխք չըպըռնես: Իմալ օր ես թարիֆ կէնեմ, իմ թարիֆ եղածի պըտի եղի:

ԹաՀգաՀվորն ասաց. - Շա՛տ պաՀրի:

ԹաՀգաՀվոր կղանչեց ուր հավատարիմ խորհըրթապահ մարթուն ու ճամխեց, գաՀցին: ԳաՀցին էնտեղ, տասն օր մացին էնտեղ, մաքյին եղավ ծընելու, մաքյին օր ծընավ, ինչպես օր տըղեն թարիֆ էրեր էր, էնպես էլ զգաՀռ վերցին ու առան էկան:

ԳաՀռ պերին, տըրեցին թաՀգաՀվորի հաՀռեճ, տըղեն կղանչին պերին, տըղեն տեսավ, օր ինչպես օր ինք թարիֆ էրեր ա, ըսկի հիլաՀ չըկա հինե: ԹաՀգաՀվոր ըզգաՀռ մորթեց, միսն էփեց, կերավ, արնով էլ լողկըցավ, Աստըծու հրամանով թաՀգաՀվոր փըրկըվավ:

ԹաՀգաՀվոր փըրկըվելով ի վերճ տըղին ասաց. - Տըղա՛, դու ի՞նչ ունիս:

Տըղեն ասաց. - Ես մեկ խեր ու մեր ունիմ:

Խըլըսուն թաՀգաՀվորն էլավ, ճամբխեց, տըղի խեր ու մեր պերեց, տըղեն մընաց էնտեղ, չուր եղավ տըսնուխինգ տարեկան, զուր ախչիկ պըսակեց վըր տըղին, տըղեն էրաց ուրին խորհըրթապահ, տըղեն խասավ ուր մուրազին:

Դուք էլ խասիք ուր մուրազին:

Աստըծուց իճավ իրեք խընձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լըսողին, մեկ էլ՝ քուլլի ջաղամաթին: